Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 483
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 12 ՕԳՈՍՏՈՍ 1885 (Ն. Տ.) 24 ՕԳՈՍՏՈՍ 1885
14 ԶԻԼԳԱՏԷ 1302

40 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

[illegible] غلطه‌ده نورادونکیان خانده ارەولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

Les annonces sont reçues à l'EASTERN AGENCY,
Karakeuy, Déirmén han.

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Կ. Պոլսոյ համար Տարեկան դահեկան արծաթ 200
» » Վեցամսեայ » » 100
» » Եռամսեայ » » 50
Գաւառաց » և տեղական Թղթատարով՝ տարեկան » » 240
Գաւառաց համար և տեղական Թղթատարով՝ վեցամսեայ » » 120
Օտար երկիրներ, տարեկան ֆրանք 56
» » վեցամսեայ » 28
Դուրս ղրկուած լրագրաց ճամբու ծախքը Տնօրէնութեան վրայ է, Խմբագրութեան ղրկուած ոեւէ նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ Կ'ԸՆԴՈՒՆՈՒԻՆ
ԻՍԹԸՐՆ ԷՃԷՆՍԻ
Գործակալութեան ձեռամբ, Գարաքէօյ, Տէյիրմէն խան

Կ. ՊՈԼԻՍ
ՇԱԲԱԹ, 10 ՕԳՈՍՏՈՍ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԶԱՐԴ ԱՓՐԻԿԷ. Տխուր լուր մը կուգայ Ափրիկէի արեւմտեան եզերքէն։ Սէնդ-Բօլ Տէ Լօանտայէ յուլիս 16 թուով կը ծանուցուի թէ Քօանզամա Հուիլլայի փոքր թագաւորն յանկարծամահ եղեր է, և բնիկներն, ըստ սովորութեան, սպիտակամորթներուն կախարդութեան վերագրելով իրենց թագաւորին մահը, ջարդ մը կազմակերպեր են։ Եւրոպացւոց վրայ յարձակելով յանկարծ, սպաններ են 20 հոգի, ընդ որս երեք կաթոլիկ վարդապետներ, որք Հուիլլայի Միսիոնարական կայանին կը պատկանէին։ Անգլիացի մը յաջողեր է փախչիլ իւր մէկ աղջկայ, բայց իւր ուրիշ երկու զաւակունք ջարդուեր են։ Այս կողմեր Բորդուկալի անուանական տիրապետութեան ներքեւ են։

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ. Հաշուեւ եղած է թէ անգլօ-ռուս պատերազմը Ռուսիա, առեւտրական տեսակէտով, աւելի պիտի վնասուի քան Մեծն Բրիտանիա։ Պալթիկ և Սեւ ծովուց միջոցաւ Ռուսիոյ արտածութիւնք պիտի փճանան։ Ռուսիոյ և Անգլիոյ միջեւ առեւտրական ուղղակի յարաբերութիւնք այնչափ մեծ չեն որ Անգլիա վնասուի անոնց ընդհատումէն։ Այդ յարաբերութիւնք վերջին տարիներս նուազած են փոխանակ աճելու, շնորհիւ բարձր մաքսերու զորս Ռուսիա դրած էր Անգլիայէն հանքածուխի ներմուծման դէմ։ Վիճակագրական հաշիւներէ կ'երեւի թէ 1884 տարւոյն մէջ Անգլիոյ ներածութիւնք 389,904,000 ոսկւոյ կը հասնէին, յորս Ռուսիայէն ներածեալ ապրանաց արժէքն էր 16,399,000 ոսկի միայն, այսինքն՝ ընդհանուրին 42 առ 1,000 միայն։ Եւ 1883 ին՝ մինչ Անգլիոյ ներածութիւնք 426,045,000 ոսկի էին, Ռուսիայէն բերուած էր ապրանք միայն 20,961,000 ոսկւոյ, որ ըսել է՝ 49 առ 1,000։ Արտածութեանց գալով, 1884 ին Անգլիայէն դուրս տարուած վաճառաց արժէքն էր 232,928,020 ոսկի, յորոց ի Ռուսիա տարուածներու արժէքն էր միայն 5,017,000 ոսկի, կամ 21 առ 1,000. և 1883 ին՝ մինչ Անգլիոյ արտածութիւնք կը հասնէին 239,799,000 ոսկւոյ, ի Ռուսիա տարուած էր 5,037,000 ոսկւոյ ապրանք, որ մի և նոյն համեմատութիւնն ունի ամբողջին։ — 1884 ին Անգլիա ընդունած էր 47,143,000 չէտվէտ ցորեն, որոյ 5.402,000 ը Ռուսիայէն. 1,607,0000 չէտ. կտաւ (քէթէն), յորմէ 1,097,000 ը Ռուսիայէն. 1,335,000 չէտ. կանեփ (քէնէվիր), յորմէ 267,000 ը Ռուսիայէն. 6,606,000 բեռ փայտ, յորմէ 1,339,158 բեռը Ռուսիայէն. և 1,806,000 չափ կտաւատ (քէթէն թօխումու), յորմէ 450,000 ը Ռուսիայէն։ Այս ցուցակէ կ'երեւի թէ Անգլիա Ռուսիոյ կարօտ է միայն կտաւի համար, եւ այս վաճառքն ալ Գերմանիոյ և Հօլանտայի ճամբով յԱնգլիա կրնայ փոխադրուիլ առանց մեծ դժուարութեան, եթէ ծովու ճամբան փակուի։— Նոյն տարին Անգլիա դուրս ղրկած է 23,344,000 տակառաչափ հանքածուխ, յորմէ 1,553,000 տակառաչափը միայն ի Ռուսիա. 3,469,000 տակառաչափ երկաթ և պողպատ, յորմէ 207,000ն ի Ռուսիա. 271,078,000 լիպրա բամպակեայ մանած, յորմէ 1,909,000ն ի Ռուսիա. 13,051,000 ոսկւոյ արժողութեամբ մեքենական գործիք, յորոց 960,000 ոսկւոյ արժէքով միայն ի Ռուսիա, և 6,567,000 չէտ. քիմիական նիւթեր, յորմէ 485,000 չէտն ի Ռուսիա։

ՀՕԼԱՆՏԱ. Էնտէփանտանս Պէլճ կը հրատարակէ շահագրգիռ ծանօթութիւններ «Կոյրերու Ուսուցիչներուն Համազգային Ժողովոյն» վրայ, որ այժմ կարգ մը նիստեր կ'ընէ յԱմսդերտամ։ Օգոստ. 4ին, ժողովոյն անդամք ներկայ գտնուեցան նուագահանդէսի մը, զոր կուտային Փարիզի կոյր երաժշտաց վարժարանին մէջ կրթուած արուեստագէտներ։ Հետեւեալ օրը ժողովն որոշեց հեռագիր մը ղրկել Ֆրանսայի Ներքին գործոց նախարարին, զայն շնորհաւորելու վասն նշանաւոր յաջողակութեան զոր այս կոյր երաժիշտք ի հանդէս բերած էին, արտասովոր ճշդութեամբ մը նուագելով ամեն տեսակ գործեաց վրայ։ Ժողովը նաև երախտագիտութեան ուղերձ մը պիտի ղրկէ Բարիզի յիշեալ կարեւոր հաստատութեան։ Եթէ մեր աչազուրկ կէղիցեան Թագէոս Պատուելին ալ ներկայ լինէր նուագահանդէսին, իւր ձայնական ու գործիական երաժշտութեամբ մեծ յաջողութիւն կը ստանար անշուշտ, թէեւ Բարիզի համբաւաւոր վարժարանէն չէր ելած։ Ժողովոյն մէկ նստին մէջ, Պ. Վուլֆ, տնօրէն Պերլինի Կոյրերու վարժարանին, երկարօրէն խօսեցաւ աչազուրկներուն կրթութեան խնդրոյն վրայ։ Հաստատեց, ի մէջ այլոց, թէ երկար ժամանակ նստողական կեանք վարել կը վնասէ ձեռաց դիւրաշարժութեան, ինչպէս մարմնոյն այլ տրամադրութեանց։ Պ. Վուլֆ ըսաւ թէ իւր վարժարանի մէջ կոյրերուն պարապումները կը զանազանուէին բնաւ, թող չտալու համար որ անդամք ընդարմանան, և անդամոց՝ մանաւանդ ձեռաց՝ դիւրաշարժութիւնը մշակելու համար տարուած խնամոց վերագրեց սա գոհացուցիչ իրողութիւն թէ, իւր վարժարանէն ելնող 100 կոյր աշակերտաց վրայ 75ը բոլորովին կարող վիճակ մ'ունէին իրենց ապրուստը շահելու։ Հաստատեց նաև թէ կոյր տղայոց շահը կը պահանջէ որ վարժարան մտնեն հինգ տարեկան կամ առ առաւելն վեց տարեկան հասակի մէջ։

ՍԵՐՊԻԱ. Սերպիոյ մէջ կան 6,116 նախակրթարանք, յորս կը յաճախեն 32,800 մանչ և 5,300 աղջիկ տղայք. 3,250 աշակերտք միջնակարգ կրթութիւն կը ստանան, և իբր 1,200 աշակերտք բարձրագոյն վարժարաններուն ուսմանց ընթացքին կը հետեւին, և բոլոր այս կրթարանաց համար կառավարութիւնը ծախք կ'ընէ 1,768,139 ֆր. մեծ խնայութեամբ։ 1883էն ի վեր կրթական վիճակն յոյժ բարւոքած է, բազմաթիւ նորանոր վարժարանաց և վերակազմութեամբ արդէն բացուածներուն։

ԱՆԳԼԻԱ. Աշխարհի մէջ ամենէն լաւ վարձատրեալ և քաջալերեալ զօրքերն անշուշտ Անգլիոյ զօրքերն են։ Թող թէ լիուլի և կանոնիկ թոշակ կը ստանան, և՝ միանգամայն առատ սնունդ. ամեն անգամ որ պատերազմէ վերադառնան, Խորհրդարանը շնորհակալութիւն կը քուէարկէ, և իւր գոհունակութեան նիւթական փորձեր ալ տալով, շքադրամներ կը բաշխէ և միանգամայն դրամական նուէրներ կուտայ անխտիր ամեն զինուորի։ Խորհրդարանն այս անգամ չխակուած քուէ արկեց 50ական անգլ. ոսկւոյ պարգեւ տալ մէն մի անգլ. զինուորի որ՝ Նեղոսի ի վեր արշաւանքին մէջ՝ Վատի Հալֆայէն անդին անցած էր, իսկ Սուաքիմի կողմը գտնուած մէն մի զինուորի 20ական ոսկի։ Սպայից աւելի մեծ գումարներ պարգեւ տրուեցան։ Եւ այս ամենայն՝ գերազանցապէս ամուլ, անյաջող և ապարդիւն արշաւանքի մը համար։ Հապա եթէ կարեւոր յաղթանակ մը տարած լինէին . . . ։

ՖՐԱՆՍԱ. Ելմտական դժուարութիւնը Ֆրանսայի մեծ դժուարութիւնն է միշտ։ Ո՛ւր է այն բարեբաստ ժամանակը, Մաք-Մահոնի Նախագահութեան վերջին տարիներն և Կրէվիի Նախագահութեան առաջին տարիներն, երբ Ելմտացոյցն 100աւոր միլիոնի հասոյթից առաւելութիւն կը ցուցնէր, որք ժողովրդեան կը բաշխուէին տուրք զեղչմամբ։ Քանի մը տարիներէ հետէ այն յաւելուածք փոխուած են 100ական միլիոն ֆր.ի բացերու։ 1886 ելմտական տարւոյն մէջ Ֆրանսայի կառավարութիւնը ծախք պիտի ընէ 3 3/4 երկլիոն ֆր. կամ 150 միլիոն անգլ. ոսկի։ Ահագի՛ն գումար մը արդարեւ։ Անշուշտ ծախուց կարեւոր զեղչ մ'ընել պիտի պարտաւորի Ֆրանսա։

—Ի Բարիզ ապրուստն անլուծելի խնդիր մը կը դառնայ հազարաւոր բնակչաց։ Վերջին չորս ամաց մէջ, Բարիզի բնակիչներէն 100,000 հոգիք պակսած են, և այս տարւոյ գարունէն ի վեր ալ 12,000 հոգիք։ Բնակարանաց վարձքերն յոյժ բարձր են, և կենաց պիտոյք զանազան տուրք ծանրաբեռնեալ են ի Բարիզ, մինչ ամեն ինչ բաղդատաբար քիչ մը աժան է արուարձաններու մէջ։ Կային շինութեան ընկերութիւններ պալատանման տուներ կառուցանելու համար, որք հիմա վարձակալ չունին. բայց ո՛չ մէկ ընկերութիւն մտքէն անցուցած էր շինել արհեստաւորաց և խոնութեանց համար փոքր տուներ։ Տը Պիւֆոն անուն մարդ մը կ'առաջարկէ 10 միլիոն ֆր.ի ազգային վիճակահանութիւն մը սահմանել, այսպիսի աժան և փոքր տուներու շինութեան հարկաւոր դրամագլուխն հայթայթելու համար։ Բայց Ֆրանսա վիճակահանութեանց առատութիւն մ'ունի, և տոմսակ գնող հասարակութիւնն, որ ընդհանրապէս աղքատներէն կը բաղկանայ, ո՛չ եւս կ'ուզէ հրապուրուիլ նոր խոստումներով։

ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ. Անգլիայէն լուր մը կուգայ նշանաւոր երկարակեցութեան մը։ Լինքոլնշիր գաւառին Շիրիչէտ գիւղին մէջ կան զոյգ մը այր և կին, Ռիչարտ և Էլիզապէթ Ուորդլի, որք վերջերս տօնեցին իրենց «ադամանդեայ հարսանիքն», այսինքն՝ ամուսնութեան 70րդ տարեդարձը։ Գիւղային եկեղեցւոյն մէջ իրենց ամուսնութեան արձանագրութիւնն է 1815 յուլիս, երբ Ուա[illegible] կը հնչէր երկրին մէջ։ 20 տարի յառաջ այս պատկառելի ամոլը տօներ էին իրենց «ոսկեղէն հարսանիք», և այժմ կատարած են ամուսնացեալ կենաց հրաշալիքն, եօթանասուն տարւոյ անխախտ և անվրդով միութիւն մը։ Աստուած հարիւրէն պահէ, պիտի ըսեն շատ մը սկեպտիկեան ամուրիք։ Բայց շատ օրինակներ, մանաւանդ անհերքելի վիճակագրեր կան որք կը ցուցնեն թէ իրենց կարծածին չափ անտանելի կեանք մը չէ ամուսնական կեանքը։

ՀՈՒՆԳԱՐԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ. Ծանուցինք այն եռանդագին ընդունելութիւն զոր Ֆրանսայի գրագէտք գտան Մաճառաց կողմէ ի Բէշդա։ Պ. Ֆրանսուա Գոփէ հանրածանօթ ֆրանսացի բանաստեղծն ի Բէշդա նշանաւոր հանդիսացաւ հակագերման բանախօսութեամբ մը, զոր խստիւ կը քննադատեն Վիէննայի լրագիրք ոմանք, մինչ այլք կը շատանան հեգնելով։ Գրական խնճոյքին մէջ, Պ. Գոփէ, բաժակ ի ձեռին, ըսաւ. «Կը յիշեցնեմ ձեզ թէ Ֆրանսա, իւր անկեալ վիճակին հակառակ, Ֆրանսա է տակաւին։ Արծիւն է միշտ արծիւ, և թէպէտ վիրաւորեալ է ու կ'արիւնի և թեւ մ'ունի բեկեալ, տակաւին աւելի բարձր կը սաւառնի քան անգղը։» Հիւրերը ջերմապէս ծափահարեցին զայս [illegible], որ առիթ կուտայ Տօյչէ Ցայթունկ լրագրոյն դիտել տալու թէ Թագաւորի գինին և մաճառական ուրիշ ազնիւ գինիք կարի իմն ազդած պէտք է լինին հանդիսականաց վրայ, նկատելով թէ Մաճառք, իրենց ողջախոհ վայրկենաց մէջ, ջերմագոյն պաշտպաններն են դաշնակցութեան ի մէջ Աւստրօ-Հունգարիոյ և Գերմանիոյ։

—Մաճառ բանաստեղծ Պ. Սպրանի, ուրիշ խնճոյքի մը մէջ հետեւեցաւ Պ. Ֆրանսուա Գոփէի, Գերմանիոյ դէմ կծու ակնարկութիւններ արձակելով Ֆրանսայի վրայ գովասանալից քերթուածի մը մէջ, զոր Գոփէի ձօնած էր։ Վիէննայի լրագիրք կը հեգնեն այս սրտաբուխ ներբողեան, յորում սա տողեր կ'երեւին. «Ֆրանսա պէտք չունի թագի մը, զի ինքն իսկ աշխարհի թագն է արդէն։»—«Միւս ազգաց մեծութիւնն յաճախ վնասիչ է. մինչ Ֆրանսայի մեծութիւնը կը դիւթէ զմեզ։»—«Չենք կրնար նախանձիլ Ֆրանսայի փառաց ու մեծութեան, ինչպէս չենք նախանձիր Երկնից։»—«Ֆրանսա աստղ մ'է և գերմանացի սուտ քաջի մը կօշիկը չի կրնար դպչիլ անոր,»— Պ. Սպրանի կը յարէ թէ Հունգարիա միշտ պաշտած է զՖրանսա, որուն Վիէննայի լրագիրք կը պատասխանեն թէ, ֆրանքօ-գերման պատերազմին մէջ Հունգարիոյ, մանաւանդ Անտրաշի կոմսին Նախագահութեան ներքեւ գտնուող Հունգարական Նախարարութեան համակրանքները բոլորովին Գերմանիոյ կողմն էին։

ՊՐԱԶԻԼԻԱ. Երեսփ. ժողովն ընդունեց ազատական նախարարութեան ծրագիրը գերութեան ջնջման համար ի Պրազիլիա։

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ. Վիէննայի Երաժշտական Ճեմարանին մէջ ջութակահարութեան առաջին մրցանակը շահած է [illegible] մը, Ֆրէտէրիք Բրայզլէր անուն։

ՅԱՆԴՈՒԳՆ ԳՈՂՈՒԹԻՒՆ. Երբ օգոստ. 12ի երեկոյն Թղթաբեր կառախումբը Բալըզէ Մարսիլիա հասաւ, տեսնուեցաւ որ թղթատարութեան 16 պայուսակներ բոլորովին պարպուած էին և արժէքաւոր նիւթերն անհետացած։

* * *

ՍՊԱՆԻԱ. Սպանիացիք կ'երեւի թէ իրենց խելքը կորուսած են։ Մադրիտի և համայն Սպանիոյ լրագիրք կ'առաջարկեն եղեր «խզել Գերմանիոյ հետ բարեկամական յարաբերութիւններն». և հեռագիրը կը յարէ թէ Մադրիտի գերմանական դեսպանն ի մօտոյ Պերլին պիտի վերադառնայ։ Բոլոր այս աղմուկ, ինչպէս կը յիշուի, Խաղաղական Ովկէանու քանի մը կղզեաց համար է, զորս Սպանիա իւր սեփականութիւնը կը համարէր, բայց զլացած էր արդեամբ ցոյց տալու զիւր տիրապետութիւն։ Գերմանիա, իբրեւ անտէր և պարապ թողուած հող նկատելով, իւրացուցած է Քարոլինեան կղզիներն, ուր եթէ սպանիական իշխանութեան ո՛ և է ներկայացուցիչ կենար, հարկաւ կամ թող չէր տար և կամ բողոք կը բառնար անմիջապէս։

Բայց ոչինչ աւելի տրամագին է քան զայս հեռագիր Հավասի, որ երկու բառով կ'ամփոփէ Սպանիոյ վերաբերեալ կարեւորագոյն լուրերը.

Մադրիտ. 21 օգոստ. Ցուցումն Սպանիոյ մէջ հետզհետէ կ'աւելնայ Գերմանիոյ դէմ, Քարոլինեան կղզեաց գրաւման պատճառաւ։

Խոլերայէ բռնուեցան յՍպանիա մէկ աւուր մէջ 4,000 անձինք, յորոց 1,400ը մեռան։

Ազգ մը որ իւր մէջ իսկ մահու և կենաց կռիւ մը կը մղէ աշխարհակալ ախտին դէմ, և չի կրնար զերծանիլ ամեն տարի բիւրաւոր զոհեր տալէ անոր, արդարեւ շատ լայն սիրտ ունենալու է՝ գերմանական Կայսրութեան հետ ի վէճ և ի վէր գալու քանի մը կտոր ժայռուտ և ամայի կղզիներու սիրոյն համար։ Ուրիշ բան է եթէ ըՍպանիացիք, իրենց հանրածանօթ հպարտութեամբ, նախամեծար կը համարին որ իրենց զօրքեր ու նաւեր Գերմանիոյ դէմ մարտնչելով կորնչին քան խաղաղութեան մէջ անփառունակ զոհեր լինելով նողկալի ախտի մը։

ՕՊՐԷՆՈՎԻՉՔ. Օպրէնովիչք են Սերպիոյ տիրող Արքայական Գերդաստանը։ Շաբաթ օրն էր երրեակ տարեդարձ մը այս Գերդաստանի համար, զի օգոստ. 10/22 օրն է տարեդարձ Միլան Թագաւորին ծննդեան, նաև Թագադրութեան իբրեւ Սերպիոյ Իշխան, երբ հասաւ իւր չափահասութեան, յամին 1872, և վերջապէս Սերպիոյ անկախութեան հրատարակման, 1878 ին։ Այս բարեպատեհ առթիւ մեծ հանդէսներ եղան ի Պելկրատ և համայն Սերպիա։ Թէ՛ Սերպիոյ և թէ՛ Օպրէնովիչ Գերդաստանին համար 1885 տարին ժթ. դարուն յաջողագոյն տարին պէտք է համարուի. զի Սերպիա միշտ խռովեալ վիճակ մ'ունեցած էր։ Սերպիա և իւր Թագաւոր Բ. Դրան կը պարտին այն առաջին կարեւոր տնօրինութիւն, որ հանդարտութիւն և տեւականութիւն մտցուց Սերպիոյ վարչական դրութեան մէջ։ Միքայէլ Իշխանին ի Պելկրատ Թօփճիտէրէի պարտէզին մէջ յանկարծական սպանման վրայ էր որ, 1868 յունիս 19ին, Բ. Դուռն ի դերեւ հանեց անոնց նպատակն որք Օպրէնովիչ գերդաստանը բառնալ կ'ուզէին՝ Պելկրատ ղրկելով Պերադ մը, որով կը հաստատէր նոյն գերդաստանին ժառանգական իրաւունքները։ Բ. Դուռն իւր այս շնորհին փոխարէն ցարդ ապերախտութիւն միայն տեսաւ Օպրէնովիչ գերդաստանին կողմէ. բայց կը յուսացուի թէ Սերպիա, անկեղծ բարեկամութիւն մը կազմելով Թուրքիոյ, [illegible] պիտի հատուցանէ իւր երախտագիտութեան պարտքը։

ԳԻՒՏԵՐ. Կելտական դամբաններ երեւան հանուեցան Կէյնսպերկի գաւառին մէջ, ի Վերին Աւստրիա, և տեսնուեցաւ որ [illegible] ժամանակաց թանկագին նշխարներ կը պարունակէին։ Ի Մատտիգհօֆէն (նոյն գաւառի մէջ) երեւան հանուած ուրիշ կելտական դամբան մը կը պարունակէր պսակ մը զուտ ոսկիէ, ճոխապէս զարդարեալ կելտական արուեստին համաձայն ոճով։

—Իսկ Ամերիկայի մէջ նորագոյն գիւտն է .... [illegible], զոր շատ քաղաքներու մէջ վաճառականք սկսած են գործածել, և որով ողջոյն տալու համար պէտք չկայ ձեռքը գլխուն տանելով գլխարկը վեր առնելու։ Ողջունելու համար բաւ է ձեռքը կոճակի մը դպցնել զոր հագուստին ո՛ և է մէկ կողմն դրած է, և յանկարծ անտեսանելի մեքենայի մը գործողութեամբ՝ գլխարկն ինքնին վեր կ'ելնէ և վար կ'իջնէ։

—= 126 =—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԷՐՆ

ԿՐԱ՛ՆԹ ՆԱԽԱՊԵՏԻՆ ՈՐԴԻՔՆ

ԳԼՈՒԽ Գ.

ԽՈՒԹՔ

Ճօն Մանկլս վախնալ սկսաւ։ Ուրիշ որ և է նաւ չէր վախնար այդ ալիքներէն, որք այնչափ ահաւոր չէին։ Բայց այդ ծանրաբարձ նաւի համար կը վախցուէր որ գլխիվայր ծովուն յատակն իջնէր. վասն զի ամեն անգամ մխրճուելուն, տախտակամածը կը լցուէր ջրով, և լոյծ ծածկոյթը չկրնալով կողին ծակերէն արագապէս հոսիլ, կրնար ընկղմել նաւը։ Ուստի վտանգին առաջն առնլու համար, խոհեմութիւն էր տախտակամածին որմերը խորտակել տապարով, որպէս զի ջուրերուն դուրս ելնելը դիւրանար։ Բայց Ուիլ Հալլէյ չուզեց ձեռք առնուլ զայդ նախազգուշութիւն։

Սակայն աւելի մեծ վտանգ մը կ'սպառնար Մաքուորիի, և անշուշտ ոչ եւս ժամանակ կար առաջն առնլու։

Ժամը տասն-մէկին միջոցները, Ճօն Մանկլս և Ուիլսըն, որք տախտակամածին եզրը կեցած էին հովին տակ, անսովոր շռինդ մը լսեցին. իրենց նաւազական բնազդումն արթնցաւ։ Ճօն բռնեց նաւաստւոյն ձեռքէն։

— Ալիքները ժայռերու կը բախին, ըսաւ։

— Այո՛, պատասխանեց Ուիլսըն, խութերու վրայ կը խորտակին։

— Հազիւ չորս հարիւր մէթր հեռի՞։

— Հազիւ։ Ցամաքին յոյժ մօտ է։

Ճօն՝ տախտակամածին որմէն վար ծռելով՝ թխատեսիլ կոհակներուն նայեցաւ և գոչեց. «Խորաչա՛փը, Ուիլսըն, խորաչա՛փը»։

Նաւապետն, որ նաւուն գլուխը կեցած էր, անծանօթ կը թուէր իւր վիճակին։ Ուիլսըն իսկոյն գնաց առաւ խորաչափն և առաջակայմին սարաններուն մէջ ելնելով վար նետեց կապարը։ Չուանը քակուեցաւ մատներուն մէջէն, և երրորդ հանգոյցին հասածին պէս՝ կապարը կեցաւ։

— Երեք գրկաչա՛փ, գոչեց Ուիլսըն։

— Նաւապե՛տ, ըսաւ Ճօ՛ն, Ուիլ Հալլէյի քով վազելով, խութերուն վրայ ենք։

Տեսա՞ւ թէ ոչ՝ Հալլէյին ուսերը վերցնելը, չենք գիտեր. բայց վազեց ղեկին քով, ղեկին վար կոխեց, մինչդեռ Ուիլսըն ալ մեծ թակաղաղին չուանը կը քաշէր նաւուն հովուն կողմը դարձնելու համար։ Ղեկը վարող նաւաստին, ուժգնութեամբ անդին մղուելով, բան մը չէր հասկցեր այս յանկարծական գործէն։

Կէս վայրկեանի չափ երկկայմին աջակողմեան գիծը խութերուն քովէն անցաւ, և, հակառակ գիշերին մթութեան, Ճօն սպիտակ գիծ մը տեսաւ որ նաւէն չորս գրկաչափ հեռի կը մնչէր։

Նոյն միջոցին, Ուիլ Հալլէյ զգալով վերահաս վտանգը, շուարեր, ընկլիքը կորուսեր էր։ Իւր նաւաստիներն, հազիւ արբեցութենէ սթափած, չէին հասկնար անոր հրամանները։ Միւս կողմէ, նաւապետին կցկտուր խօսքերն և հակասական հրամանները կը ցուցնէին որ այդ տխմար արբշիռը կորուսած էր զիւր պաղարիւն։ Ցամաքին ութ մղոն մերձակայութիւնն յանկարծակիի բերած էր զայն, մինչդեռ երեսուն քառասուն մղոն հեռի կը կարծէր։ Հոսանքը սովորական ճանբէն դուրս ձգած և անպատրաստ գտած էր թշուառ սովորամոլը։

Սակայն Ճօն Մանկլսի արագ գործողութիւնն հեռացուցեր էր նաւը խութերէն։ Բայց Ճօն չէր գիտեր իւր դիրքը։ Թերեւս խարակներու գօտիէ մը պաշարուած էր։ Հովը զիրենք դէպ արեւելք կը քշէր, և մէն մի տատանում կրնար ժայռի մը զարնել։

Արդարեւ շատ չանցաւ, ժայռերու բախելով ընկրկող ալեաց շառաչիւնը սաստկացաւ նաւուն աջ կողմէն. նորէն հարկ եղաւ հովուն կողմը քշել նաւը։ Ճօն ղեկը նորէն վար դարձուց և նաւուն ընթացքը փոխեց։ Խութերը կը շատնային նաւուն յառաջակողման տակ, ուստի հարկ եղաւ գլուխն հովուն դարձունելով նորէն բացը քշուիլ։ Այս գործողութիւն պիտի կրնա՞ր յաջողիլ այնպիսի նաւով մը, որ հաւասարակշռութիւն չունէր, և առագաստներն ալ մեծ մասամբ ամփոփուած էին։ Յաջողութիւնն հաւաստի չէր, բայց պէտք էր փորձել։

— Ղեկը բոլորովին վա՛ր, գոչեց Ճօն Մանկլս Ուիլսընի։

Մաքուորի սկսաւ մօտենալ խարակներու նոր գծին։ Շատ չանցաւ, ծովը ջուրին մէջի ժայռերուն բաղխելով փրփրեցաւ։

Տագնապալից վայրկեան մ'էր։ Փրփուրը լոյս կուտար կոհակներուն։ Կարծես թէ փոսփորափայլութեան երեւոյթ մը յանկարծ կը լուսաւորէր զանոնք։ Ծովը կը մռնչէր այնպիսի ոռնմամբ մը, որ հեթանոսական հին դիցաբանութեան ոգեւորեալ ժայռերուն գոչիւնը կը յիշեցնէր։ Ուիլսըն և Միւլրատի, ղեկին անւոյն վրայ ծռած, կը կոխէին զայս իրենց բովանդակ ծանրութեամբ։

Յանկարծ ընդհարում մ'եղաւ։ Մաքուորի ժայռի մը վրայ նստեր էր։ Նաւուն յառաջակողմը խորտակեցաւ և առաջակայմին հաստատութիւնը վտանգի մէջ ձգեց։ Նաւուն շրջումը պիտի կրնա՞ր կատարել առանց ուրիշ վնասուց։

Ոչ. վասն զի յանկարծ հանդարտութիւն մը տիրեց, և նաւը նորէն հովին առջեւ եկաւ. բայց իւր շրջումն արգիլուեցաւ բացարձակապէս։ Բարձր կոհակ մ'եկաւ, վերցուց զայն ասկէն, և աւելի առաջ քշեց խութերու վրայ։ Նաւը կրկին անգամ ժայռերուն վրայ ընկաւ ուժգնապէս։ Առաջակայմն իւր բոլոր կազմածներով վար ընկաւ։ Նաւն երկիցս քերեց ժայռերն և ապա անշարժ մնաց երեսուն աստիճանի չափ աջ կողմը ծռելով։ Նաւադղին սանդուղը ծածկող տախտակէ կնգուղին ապակիները ջարդուբուր եղան։ Ուղեւորք վեր վազեցին, բայց կոհակները մի ծայրէն միւսը կ'աւլէին տախտակամածն և անհնար էր կենալ անդ անվտանգ։ Ճօն Մանկլս, գիտնալով որ նաւն ամրապէս նստած էր աւազին վրայ, աղաչեց զանոնք որ նորէն նաւուն գոգը մտնեն։

—Ճշմարտութիւնը, Ճօ՛ն, հարցուց Կլէնարվան պաղութեամբ։

—Ճշմարտութիւնը, Մ'իլորտ, պատասխանեց Ճօն Մանկլս, այս է թէ ծովասոյզ չենք լինիր։ Իսկ նաւուն քայքայումն ուրիշ խնդիր է, բայց ժամանակ ունինք ասոր վրայ խորհելու։

—Կէս գիշե՞ր է այժմ։

—Այո՛, Մի՛լորտ, և պարտինք լուսնալուն սպասել։

—Չե՞նք կրնար մակոյկը ծովը իջուցնել։

—Այս ալեկոծութեան և այս մութի մէջ անհնարին է։ Մանաւանդ չենք գիտեր թէ ցամաքին ո՞ր կողմը պարտինք ելնել։

—Ուրեմն, Ճօ՛ն, աստ կենանք մինչև առաւօտ։

Սակայն Ուիլ Հալլէյ խելագարի պէս կը վազէր իւր երկկայմին տախտակամածին վրայ։ Իւր նաւաստիներն սթափելով իրենց արբեցութենէն, օղիի տակառ մը կոտրեցին և սկսան ըմպել։ Ճօն հասկցաւ որ իրենց արբեցութիւնը սարսափելի տեսարաններ պիտի ընծայէր։ Կարելի չէր յուսալ թէ նաւապետը պիտի կրնար զանոնք զսպել։ Թշուառականն իւր մազերը կը փետտէր և և թեւերը կը գալարէր։ Իւր վաճառքը միայն կը խորհէր, որ ապահովագրեալ չէր։

—Տունս փլա՛ւ, տունս փլա՛ւ, կը գոչէր տախտակամածին մի կողմէն միւսն երթեւեկելով։

Ճօն Մանկլս փոյթ չէր ըներ զայն մխիթարելու։ Զինեց իւր ընկերներն, և ամենն ալ պատրաստ կեցան յետս մղելու նաւաստիներն որք անխնայ ջին կը խմէին, սոսկալի հայհոյութիւններ ընելով։

—Այս թշուառականներէն ո՛րն որ նաւագոգին մօտենայ, շան պէս կ'սպաննեմ, ըսաւ հազարապետն հանդարտութեամբ։

Նաւաստիները տեսան անշուշտ թէ ուղեւորք պատրաստ էին զիրենք սանձահարելու, վասն զի աւարառութեան քանի մը փորձերէ յետոյ աներեւոյթ եղան։

Ճօն Մանկլս ոչ եւս զբաղեցաւ այդ արբշիռներուն, և լուսնալուն սպասեց անհամբերաբար։

Նաւը բացարձակապէս անշարժ էր յայնժամ։ Ծովն ալ կը հանդարտէր տակաւ։ Հովը կ'ընկնէր։ Նաւուն իրանը կրնար տակաւին քանի մը ժամ դիմանալ։ Առաւօտուն, լուսնալէ յետոյ, Ճօն պիտի քննէր ծովափին։ Եթէ ցամաք ելնելու դիւրութիւնն ընծայէր, նաւուն փոքրիկ կուրն, որ միայն մնացած էր, կրնար ուղեւորաց և նաւաստեաց փոխադրման ծառայել։ Առ նուազն երեք ուղեւորութիւն հարկ էր, վասն զի չորս հոգի միայն կրնային նստիլ կուրին մէջ։ Իսկ մակոյկն, ինչպէս որ տեսնուեցաւ, պահ մ'առաջ յափշտակուած էր ալիքներէն։

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Մոսկուայէ կը գրեն մեզ օգոստ. 6 Թուով.

Ինչպէս լսում ենք, Մակար Սրբազանի հաստատման լուրը ի գահ Կաթողիկոսութեան Ամենայն Հայոց Թիֆլիսի հայ հասարակութեան վրայ խիստ վատ տպաւորութիւն է գործել. Հաւաստեացնում են մեզ, թէ սորա մասին հեռագրեր յայտնած են Պետերբուրգ բարձրագոյն կառավարութեան։ Այդ անսպասելի լուրը առնելուն պէս, որոշած են խմբովին որ Մակարականներից ոչ ոք չընդունուի։ Տեղւոյս հասարակութեան մէջ էլ դժգոհութիւն մեծ է։

Բեդրսպուրկէ օգոստ. 4 Թուով կը գրեն մեզ.

Պէտք է իմանալ, որ Մակար Սրբազանի հաստատումն ի Կայսեր տեղի ունեցեր է յուլիսի 18ին։ Այդ Թուին հաստատման որոշագիրը յանձնուած է եղել Պետական բարձրագոյն ատեանին՝ Պրավիտէլստվուճուչչի Սենատին (Պետական Ծերակոյտ), որը ինչպէս երեւում է, յարմար է գտել հրատարակութեան հանել իւր սեպհական Թերթի միջոցաւ օգոստոսի 2ին, իսկ յետագայ օրը օգոստոսի 3, այդ Թերթից՝ արտատպեցին բոլոր պաշտօնական և մասնաւոր Թերթերն։

Կը կարծուի թէ ռուս կառավարութիւնն զՄակար Սրբազան կաթողիկոս հաստատած է այն պատճառաւ որ Թուրքիոյ և Ռուսիոյ Հայոց եկեղեցականք մեծամասնութեամբ զնա Սրբազնութիւն Կաթողիկոս տեսնել կը փափաքէին. Այս առթիւ դիտել կը տրուի թէ ռուս կառավարութիւնը կրօնային խնդրոց մէջ միշտ աւելի կը հետեւի կրօնական քան աշխարհական դասուն կարծեաց։

Ռուսէյ Կուրիէրի օգոստոս 7ի Թուոյն մէջ՝ զոր ստացանք այս առաւօտեան ռուսական Թղթաբերով, հրատարակուած տեսանք Գեր. Սուքիաս Եպիսկոպոս Պարզեանցի մէկ նամակն որով կը հերքէ այն լուրը թէ ինք խնդրագիր մատուցած է Ռուսիոյ Ներքին գործոց նախարարութեան, ի նպաստ Մակար Սրբազանի։

Ինչպէս որ ծանուցինք մեր շաբաթ աւուր Թուով, Ս. Պատրիարք Հայրը նոյն օր Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Մեծ-Եպարքոս Սայիտ փաշայի հետ և Ն. Բարձրութեան մատոյց Ազգ. Ժողովոյ վերջին նստի որոշման համաձայն Խառն Ժողովոյ կողմէ պատրաստեալ շնորհակալեաց Ուղերձն։

Դատական Նախարարութեան կողմէ առ Ազգ. Պատրիարքարան ուղղեալ Թէզքէրէ մը կը ծանուցանէ թէ Աղթամարայ Կաթողիկոսութեան յիշատակման առթիւ ի Վան ձերբակալեալ ազգայինք արձակուած են։

Կը յիշուի թէ Կարնոյ Գաւառ. Ժողովը Կրօն. Ժողովէն խնդրած էր Եպիսկոպոսութեան վկայական Վիճակին Առաջնորդ Գեր. Օրմանեան Մ. վարդապետին համար։

Այս խնդրոյ վրայ տակաւին որոշում չէ տուած Կրօն. Ժողովը։ Կը լսենք թէ եկեղեցականաց մէջ երկու կարծիքներ կան։ Մին, յենլով եկեղեցւոյ աւանդութեանց վրայ, որուն համեմատ Վիճակի մը համար Եպիսկոպոս չի կրնար ձեռնադրուիլ ցորչափ կենդանի է Վիճակաւոր Եպիսկոպոսը, կ'ըսէ թէ Կարնոյ վրայ Եպիսկոպոս չի կրնար ձեռնադրուիլ ի կենդանութեան Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր։ Ուրիշներ կ'առարկեն թէ այս աւանդութիւն խզուած է բազմիցս, և մի և նոյն Վիճակի վրայ քանիցս Եպիսկոպոսներ ձեռնադրուած են ի Թուրքիա, ինչպէս Մամբրէ Եպիսկոպոս Գլակայ վանքին վրայ ձեռնադրուած էր ի կենդանութեան Խրիմեան Սրբազանի։ Այս պարագայից մէջ, վերջնական որոշումը Կաթողիկոսին Թողուած է։ Արդէն, թէև Կ. Պոլսոյ Կրօն. Ժողովն եպիսկոպոսութեան վկայական մը տայ Թուրքիոյ եկեղեցականի մը, Կաթողիկոսը կրնայ ընդունիլ կամ մերժել վկայականն։ — Ինչպէս կ'երեւի, Օրմանեան վարդապետին արժանեաց խնդիրը վէճի տակ չէ. խնդիրն եկեղեցւոյ օրէնքն և աւանդութիւնները մեկնելու վրայ է, և կը կարծուի թէ, Մակար Կաթողիկոս, եթէ խստիւ նախանձախնդիր լինի եկեղեցական օրինաց և աւանդութեանց, չպիտի ների որ Կարնոյ վրայ նոր Եպիսկոպոս մը ձեռնադրուի, Թէեւ ուրիշ ամեն տեսութեամբ հարկաւոր և պատշաճ լինի Եպիսկոպոս մը ձեռնադրել Կարնոյ նման կարեւոր վիճակի մը համար։ Դիտել կը տրուի նաև թէ հոգելոյս Տ. Գէորգ Կաթողիկոսը մերժած էր նմանօրինակ առաջարկ մը, յիշեցնելով թէ Յարութիւն Եպիսկոպոս կենդանի է դեռ։

Կատարեալ յաջողութեամբ պսակուեցաւ Թատերական ներկայացումն զոր շաբաթ գիշեր Միացեալ Ընկերութեանց Իւսկիւտարի Օժանդակ Մասնախումբը տուաւ յԻւսկիւտար։ Ամերիկեան Թատրոնն, որ Պոլսոյ մեծագոյն Թատրոններէն մին է, նեղ կուգար պարունակելու խուռն բազմութիւնն որ փութացած էր անդ Իւսկիւտարի ամեն կողմերէն։

Ներկայացեալ տրամն և զաւեշտը մեծ համակրութեամբ ընդունուեցան հանդիսականաց կողմէ, որք իրենց գոհունակութիւնը կը յայտնէին եռանդագին ծափահարելով Կիւրեղեան եւ Զափրաստճեան էֆէնտիներն և տիկին Հէքիմեան, որք [illegible] կը կատարէին իրենց դերերը։ Փոքրիկ միջադէպ մը միայն պահ մ'եկաւ վրդովել ներկայացումն։ Քանի մը սրիկայներ, ուզելով Թատրոնէն ներս մտնել, կը յաջողին Թատերաբեմին ետեւի դուռը խորտակել, ինչպէս և կանանոցը տանող փոքրիկ դուռը։ Մերձակայ օթեակներու մէջ քանի մը ընտանիքներ խորտակման ձայներն առնլով, կ'սկսին աղաղակ բառնալ, կարծելով թէ Թատրոնը կը փլչի. շատեր ալ կը կարծեն թէ Թատերաբեմը կը բռնկի. տասը վայրկենի չափ, անկարգելի խառնաշփոթութիւն մը կը տիրէ. հանդիսականք կ'ըշտապեն սրահէն դուրս փախչիլ խուճապաւ, և օթեակներէն շատեր կը պարպուին։ Դժբաղդաբար վայրկեան մը կ'ստիպուին ընդհատել ներկայացումը։ Բարեբաղդաբար, Մասնախմբի անդամներն որք անդ կը գտնուէին, կը յաջողին անդորրել ժողովրդեան յուզումն, յայտարարելով թէ ոև է վտանգ չկայ։ Բացի այս փոքրիկ միջադէպէն, ներկայացումը շարունակեցաւ ամենակատարեալ բարեկարգութեամբ։ Ոստիկանութիւնը ձերբակալած է այդ խռովութեան հեղինակներէն երեք սրիկայներ։

Թատրոնին զուտ հասոյթն եղած է 35–40 ոսկի։ Այս գումար ինքնին բաւական ապացոյց է ցոյց տալու Իւսկիւտարի Մասնախմբին եռանդուն ջանքերն և գովելի գործունէութիւնը։

Օգոստ. 4ի կիրակի գիշերն Հարսանեաց գեղեցիկ հանդէս մը կատարուած է ի Սամսոն։ Քաղաքին պատուաւոր ազգայիններէն Կարապետ էֆ. Պալըքճեան կ'ամուսնանար ընդ ազնուազգի Օր. Եւլմն Բ. Թիւրքեանի՝ Նախկին աշակերտուհի Մեզպուրեան վարժարանի։

Հանդիսին ներկայ գտնուած են հայազգի և օտարազգի բազմաթիւ հրաւիրեալք, վաճառականաց դասն, ինչպէս և աւստրիական և պարսկական փոխ. հիւպատոսք։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՐՑ ՏՊԱՐԱՆԻՆ

Պատմութիւն վարուց Մարիամու կուսամօր Աստուածածնի Տէր Օրսինի քահանայի, Թարգմանեալ հանդերձ յաւելուածովք ի Հ. Աւգեննտիոսէ Վ. Գուրգէնեան։ Գին 2.50 Փր.

Շարք ընտիր պատմութեանց. Այս վերնագրոյն ներքեւ Վենետիկեան Հարք որոշած են հետզհետէ հրատարակել ախորժելի վիպասանութիւններ և պատմութիւններ։ Առաջին հատորն, որ հրատարակուած է, կը պարունակէ եօթն պատմութիւններ, Երէք Մահապարտ, Կապարեալ Նմանութիւն, Կէտէլ Գանձոն, Ոսկեկալէ հացկերոյթ, Տղջոց Փեղեղանքը, Ոսկեղէն մը, Անէծեալ տունը, Վենետիկցի ծաղրածու, Իտալական զինուց պատիժը։ Այս շարքին մէջ երբեմն պիտի հրատարակուին նաև ընդարձակ վիպասանութիւններ մէկ կամ երկու հատորով։

Ա. հատորին գինն է 1.75 Փրանք։

Կ. Պոլսոյ մէջ կեդրոնատեղին է ի Մխիթարեանց Գրատունն, Ղալաթիա, Սեղբոս խան։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիէննայէն կը հեռագրեն թէ Բերայի ջրանկրաց խմբի հրամանատար Ջէխէնեի փաշա, ազգաւ մաճար, իսլամութիւնն ընդուներ է և այս դէպք մեծ աղմուկ յարուցեր է Մաճար ազնուականաց դասուն մէջ։

Անգլիական արտասովոր պատուիրակ Սըր Հէնրի Տրըմնտ Ուոլֆ շաբաթ առաւօտ լրացունելով 48 ժամու օրինական քարանթինան, դեսպանատան շոգեմակոյկով մը Թարապիա գնաց իւր ուղեկցաց հետ և Բէթալա Պանդոկին իջեւանեցաւ։

Միջօրէին, Սըր Ուոլֆ անգլիական դեսպանատունն երթալով փոխադարձ այցելութիւն տուաւ Սըր Հուայթի որ առջի օրը շոգենաւ գնացած էր իրեն բարի գալուստ մաղթելու։

Իրիկուան կողմ Բ. Դուռը գնաց այցելութիւն տալու արտաքին գործոց Նախարար Ասիմ փաշայի, բայց Ն. Վսեմութիւնը բացակայ գտնուելով, Սըր Ուոլֆ տեսակցեցաւ խորհրդական Ֆախրի պէյի հետ և ապա եպարքոսական պաշտօնատունն երթալով, տեսակցեցաւ Բարձր. Սայիտ փաշայի հետ։

Կը կարծուի թէ անգլ. պատուիրակն վաղը իսկ պատիւ պիտի ունենայ Վեհ. Սուլթանին ներկայանալու։

Թայմզ այս առթիւ Եգիպտական խնդիրն յիշելով հետեւեալ խորհրդածութիւններ կ'ընէ։

«Եթէ խնդրոյն սկիզբէն ի վեր անգլիական կառավարութիւնը մեզ հետ խորհրդակցելով գործէր, շատ մը տխուր պարագաներու տեղի չէր տրուեր, ուրեմն մենք պատճառ չենք տեսներ այն վիճակին որում ենթակայ եղած է Եգիպտոս երեք տարիներէ ի վեր և կրած է նիւթական և բարոյական անկում. Քաղաքական աշխարհն այնքան համամիտ չէ թուիր Անգլիոյ»։

Ռուսական դեսպան Պ. Նէլիտոֆ և ռումանական դեսպան Պ. Կիքա շաբաթ օր արտաքին գործոց պաշտօնատունն երթալով տեսակցեցան խորհրդական Ֆախրի պէյի հետ։

Ամերիկացի գիտնական հաղարապետ Հէնրի Տէն որոյ հրապարակախօսութիւնք մեծապէս կը գնահատուին Միացեալ Նահանգաց մէջ, անցեալ տարի Ցինաստան և արեւելեան քանի մը քաղաքներ այցելեց գրական խուզարկութիւններ կատարելու համար։ Հաղարապետը Կ. Պոլիս գտնուած ժամանակ, Վեհ. Սուլթանին յատուկ ուշադրութեան արժանացաւ, որ բարեհաճեցաւ Թոյլ տալ որ այցելէ արքունի Գանձը, Թօփ-գաբուի պալատն եւ այլ պատմական յիշատակարաններ, ընկերակցութեամբ կայսերական Թիկնապահի մը։

Պ. Հէնրի Տէն իւր գտած այս ազնիւ ընդունելութեան համար ուզելով երախտագիտութիւնն արտայայտել, ամերիկացւոց ազգային մեծ բանաստեղծ Լոնկ Ֆէլլօի քերթուածներէն հանդերձ հեղինակին ձեռագիր ձօնով Կ. Պոլիս ղրկած է, Վեհ. Սուլթանին մատուցանելու համար։

Պալատան արարողապետ Մինիր փաշա՝ ամերիկեան հիւպատոսարանի տառմէն Թարգմանին ձեռամբ ստանալով այդ պատուական գրեանքն, ներկայեց զայնս Վեհ. Սուլթանին որ հաճեցաւ ընդունիլ և գոհունակութիւն արտայայտել։

Պ. Տէն կը գտնուի այժմ ի Սան Ֆրանչէսկօ ուր հրապարակախօսութիւններ կ'ընէ արեւելից մէջ իւր բրած ուղեւորութեանց և ունեցած տպաւորութեանցը վրայ։

Իզմիրէն առնուած լուրեր կը ծանուցանեն թէ իտալական շրջուն նաւատորմը կազմող նաւերն այդ նաւահանգստին մէջ կը համախմբին այս օրերս։

Առողջապահական վարչութիւնն որոշած լինելով որ Սեւ ծովէն եկող ռուսական շոգենաւք Պուրկազի առջեւ 48 ժամու քարանթինայի ենթարկին, ռուսական շոգենաւային ընկերութիւնը խնդրած է յիշեալ վարչութենէն որ իւր շոգենաւք այլ եւս քարանթինա չ'ըսպասեն ի Գավագ, քանի որ Պուրկազի առջեւ կը մաքրին զայն։

Առողջապահական վարչութիւնը պատասխանած չէ դեռ ընկերութեան այս առաջարկին։

Կը յիշուի թէ Սամսոնի ընդհանուր ժողովն իւր վերջին նստաշրջանին մէջ Կըզըլին յոյն մէտրապոլտին պաշտօնանկութիւնը քուէարկած էր։

Ֆէնէրի Պատրիարքարանն այս մասին որոշում մը տալէ առաջ հարկ դատեց քննութիւն մը կատարել այն պատճառներու վրայ որք Սամսոնցւոց դժգոհութեան առիթ տուած էին։ Պատրիարքարանն այս քննութենէն յետոյ միայն Նոր Մէտրապոլտի ընտրութեան պիտի ձեռնարկէ, եթէ հարկ դատէ։

Սինոդի կողմէ քննիչ կարգուած են, ըստ օրինի, մօտակայ երկու Թեմերու՝ այն է Իզմիրի և Հռոդոսի Մէտրապոլտաք որք հրաման ստացած են Սամսոն ուղեւորել։

Կրէտէէն առնուած վերջին լրոց համեմատ, կուսակալ Սավա փաշա իւր քննական պտոյտէն վերադարձին, կղզւոյն վարչական պաշտօնէից մէջ կարեւոր փոփոխութիւններ կատարեր է։

Շաբաթ աւուր Թուով առիթ չունեցանք խօսելու Դաշտային Հանդիսին վրայ զոր անգլիական դեսպանուհի Տիկին Հուայթ նախորդ օրը տուաւ Թարապիոյ դեսպանատան պարտէզին մէջ։ Նշանակիս առաջին հանդէսն էր որ կը տրուէր անգլիական դեսպանատան մէջ. վերջինն տեղի ունեցած էր անցեալ սեպտեմբերին, և հրաւիրեալք գոհ և ուրախ էին վերստին զիրար գտնելով գեղազուարճ պարտէզին բարձրաբերձ ծառերուն ներքև և նոյն ընտիր ընկերութեան մէջ։ Պարտէզին մէկ մասն հովանիներու տակ և դետինը ծածկուած կտաւով, պարասրահի փոխարկուած էր. ընտիր նուագածուաց խումբ մը կը նուագէր, և պարերը տեղի ունեցան մեծ ոգեւորութեամբ։ Շքաեղանն պատուական էր և դեսպանուհին իւր հիւրերը կը մեծարէր մեծ ազնուութեամբ։

Դեսպանական մարմինը ներկայ էր իւր ամբողջութեամբ։ Քոմթ Քորթի կոմսը՝ նոր վերադարձած Քարլսպատի ջերմուկներէն, քաջառողջ և կազդուրեալ կ'երեւէր. ֆրանսական, ռուսական և աւստրիական դեսպանք, ինչպէս և գերմանական գործակատարն, Տիկին Ռատովիծ, սպանիական, ամերիկեան, պելճիքական, հելլենական, սերպիական և հոլանտական դեսպանք անձամբ պատասխանած էին Պ. և Տիկին Հուայթի հրաւէրին։ Օսմանեան Նախարարներէն և բարձրաստիճան պաշտօնատարներէն կը նշմարուէին, Էդհէմ փաշա, Հասան Ֆէհմի փաշա, Ելմտական նախարար Մունիր փաշա, Հօպարտ փաշա, Տրլայնէր փաշա, Րիւսթէմ փաշա, Նէճիպ փաշա, Նորատունկեան Գ. էֆէնտի, Փորթուգալ Մ. էֆ. և այլք։

Հանդէսը բնականաբար աւելի մեծ փայլ պիտի ստանար Սըր Տրըմնտ Ուոլֆի ներկայութեամբ, եթէ Վեհ. Թագուհւոյն պատուիրակն քարանթինայի ենթարկուած չլլիներ այդ պահուն։

Եգիպտոսի Էլ-Ահրամ լրագիրը կը ծանուցանէ թէ Գահիրէի մէջ պատերազմական պաշտօնատունէն հրդեհ ծագելով Սուտանի խնդրոյն վերաբերեալ ինչ ինչ պաշտօնական Թուղթեր այրեր են։

Ելմտական Նախարարութեան բարձրագոյն պաշտօնէից մէջ վերջերս կատարուած փոփոխութիւնք իրենց նշանակութիւնն ունին։ Ընդհ. Ծախուց տնօրէն Իպրահիմ պէյ, որ հրաժարեցուցուեցաւ, երեսուն տարիէ հետէ կը վարէր զայդ պաշտօն և Ելմտական Նախարարութեան ազդեցիկ պաշտօնատարներէն մին էր։ Նոյնպէս մեծ կարեւորութիւն ունի Տասանորդի արոց գլխաւոր տնօրէն Ճէմալ պէյի պաշտօնանկութիւնն։

Այս փոփոխութիւններէն կարելի է հետեւցունել թէ, կ'ըսէ Էսթամպուլ, մօտ է ժամն ուր Ելմտական և Գանձային վարչութեանց մէջ կարեւոր բարեփոխութիւններ պիտի նկրմուծուին. Գանձուց պաշտօնատունը լի է զեղծումներով եւ, ինչպէս օրինակները ցոյց կուտան, ո՛րքան անձինք տեսնուած են այդ պաշտօններու մէջ հարստացած որ այս ենթադրութեանց մէջ ճշմարտութիւններ գտնելու կը միտիմք։ Ինչ որ ալ լինի, այդ պաշտօնատունն խճողուած է պաշտօնատարներով որք յուռի կը ճարուին կընդունին և գործոց բարւոք մատակարարութեան արգելք կը լինին։ Ձեռք առնուելիք առաջին միջոցներէն մին պէտք է լինի հեռացունել ո՛չ միայն ապականեալ պաշտօնեայներն, այլ և ինչ որ աւելորդ է, վասն զի ապականութիւն յառաջ կը բերեն գըլխաւորաբար աւելորդ պաշտօնեայք։

Էսթամպուլ Թուելով ապա այս տեսակ բարենորոգման մը բազմադիմի դժուարութիւններն, յոյս կը յայտնէ թէ Բարձր. Մեծ-Եպարքոսն որ չկասիր ո՛չ մէկ դժուարութեան առջեւ, առաջ պիտի տանի իւր գործը։

Էսթամպուլի յիշած զեղծմանց առթիւ, ի դէպ է ծանուցանել թէ Թարիքի և Թերճիւմանը Հագիգաթի ուղղեալ նամակ մը՝ որոյ ստորագրութիւնը ծածկուած է, կը յայտարարէ թէ Ծախուց Նախորդ հաշուակալ Իպրահիմ էֆէնտի, որ երբեմն միջակ կարողութեան տէր անձ մ'էր, հինգ հարիւր հազար ոսկոյ հարստութիւն ունի այսօր։

Նամակագիրը կ'առաջարկէ նկատողութեան առնուլ սոյն խնդիրն և քննութիւն բանալ թէ որպիսի միջոցներով այդքան հարստութիւն դիզած է յիշեալ պաշտօնատարն։

Կառավարական պաշտօնատուներէն նամակատան յանձնած որ և է ծրար այսուհետեւ ձրիապէս պիտի ղրկուի։

Մաքսային սակագնոց պատրաստութեամբ զբաղող յանձնաժողովն իւր խորհրդակցութիւնները կը շարունակէ։

Կ'ըսուի թէ ապրանաց ամբողջութիւնն հարիւր տեսակի բաժնուած է և յանձնաժողովն անոնցմէ 70ին վրայ կատարեալ համաձայնութիւն գոյացուցեր է։

Մէսաժէր վերապահութեամբ զրոյց մը կը յիշատակէ թէ Օսմ. Հանրային Պարտուց Փարիզի և Լոնտրայի մասնախումբք մտադիր են յիշեալ վարչութեան տնօրէն անուանել վերստին զՊ. Համիլթըն Լէնկ։

Բէժիի Ընկերութիւնն իւր գործարանաց մէջ կարեւոր խնայութիւն մ'իրագործեց այս օրերս։

Ծխախոտի պատրաստութեան համար մինչեւ ցարդ 750 գործաւորք կ'աշխատէին որոց իւրաքանչիւրն օրական 8 քիլօկրամ ծխախոտ կը զտէր, մինչ ուրիշ գործարանաց մէջ մարդ գլուխ օրը 35 օխա ծխախոտ կը զտէ. հետեւաբար թէ՛ այդ գործաւորաց մեծ մասն և թէ՛ չարդող գործաւորք ճանբուած են և մեքենայից միջոցաւ շատ դիւրաւ կը կատարուի անոնց գործն։ Այս վերջին տնօրէնութիւն ձեռք առնուած է մանաւանդ սա պատճառաւ որ գործարանին տնօրէնութիւնն ուզելով ի սկզբան ճանբել չարդող գործաւորաց կէսը, միացեալք գործադուլ ըրեր են. հետեւապէս ամենքը մեկանց ճանբուեր են։ Միանգամայն պաշտօնանկ եղեր են այդ գործաւորաց պետերն որք չէին կրցած գործադուլն արգելուլ։

Բէժիի ընդհանուր տնօրէն Պ. Լէնկ ընկերակցութեամբ միւս երկու տնօրէններու՝ Պէրթրամ էֆէնտիի, Հասան պէյի և Պ. Պօվէի երկու օր առաջ աչքէ անցուց Ընկերութեան ամբողջ դէտերն, 126 ձիաւոր և 160 հետեւոտն։ Պ. Լէնկ իւրաքանչիւրին անձին ու պաշտօնին վրայ տեղեկութիւններ հարցուց ու ապա խօսքն ուղղելով ընդհանուրին, զարմանք յայտնեց որ այս տեսակ լաւ կազմակերպեալ դէտերու մարմին մ'ունենալով, ինչպէս կը լինի որ ծխախոտի մաքսախոյսութիւնք վերջ չեն գտներ։ Ի վերջոյ յարեց որ եթէ իրաց արդի վիճակը կարեւոր փոփոխութիւններ չկրէ, բոլոր դէտերն ալ պիտի ճանբուին։

Եթէ, դիտել կուտայ պաշտօնակից մը հեղնութեամբ, մաքսախոյս Պարոնայք տասական նշանակութեամբ առնլով ընդհ. տնօրէնի այս խօսքեր, իրենց «եռանդը» կրկնապատկէին այս տեսակ տնօրէնութեան մը առիթ տալու համար (·) . . . . .

Շաբաթ իրիկուն, Գուզկունճուգի մէջ փոքր կռիւ մը ծագեցաւ քանի մը Հայոց և Հրէից միջեւ. կռիւ՝ որ կրնար մեծ համեմատութիւններ ստանալ եթէ ոստիկանութիւնը ժամանակին չմիջամտէր։

Երեկոյեան ժամ 12ին ատենները, երբ վերջին շոգենաւու ուղեւորք Գուզկունճուգէն կը վերադառնային իրենց բնակարանները, կը տեսնեն մի քանի փոքրիկ հայ ստահակներ որք կը նախատէին հինգ-վեց գինով Հրեայներ։ Հրեայներն ալ, պատասխանել ուզելով, կ'սկսին հայհոյել Աւետարանն։ Հայ երիտասարդ մը, չկրնալով հանդուրժել այս Թշնամանաց, Հրեայներուն վրայ կը յարձակի և քիչ ատենուան մէջ կռիւը կը մեծնայ։ Քանի մը Հրեայներ չարաչար կը ծանակոծուին։ Բարեբաղդաբար, անցորդներէն ոմանք կը փութան իրողութիւնն իմացնել ոստիկանութեան, և քիչ վերջը ամեն ոք կը ցրուի։

Ալպանիայէն տեղական յոյն Թերթի մը հաղորդուած տեղեկութեանց նայելով, հանրային ապահովութիւնն յոյժ անգոհացուցիչ վիճակի մէջ է ի Տէպրէ (Վերին Ալպանիա)։ Աւազակաց խումբեր հետզհետէ բազմանալով, չեն շատանար դաշտերու մէջ ոչխարաց հօտեր յափշտակելով և անցորդներ կողոպտելով, այլ արձակ համարձակ գիւղերը կը մտնեն, աւարառութիւններ կընեն և հարուստ գիւղացիները լեռը կը տանին յետոյ փրկանք պահանջելու համար։ Կ'ըսուի թէ այս պահուս աւազակաց ձեռքը գերի գտնուող գիւղացւոց Թիւն 300ի կը հասնի։

Զինուորական հրամանատար Վէյսէլ փաշա, որ Բրիզրէնտ կը գտնուի, հրամայեր է 16 գունդ կանոնաւոր զօրք համախմբել Տէպրէի ամեն կողմն աւազակներն հալածելու և բնաջինջ ընելու համար։

Օրէնքը կը պահանջէ որ դատարանաց հասոյթներն իւրաքանչիւր տեղւոյ կառավարական սնտուկին յանձնուին, առանց պաշտօնէից ամսականաց կամ այլ դատական ծախուց յատկացուելու։ Սակայն ստուգուելով որ այս պայման ճշդութեամբ չգործադրուիր ամենուրեք և դատարանաց հասոյթք յաճախ ծախուց կը յատկացուին, որով Ելմտական Նախարարութեան ընդհանուր հաշուոց կանոնաւորութեան եւս արգելք կը լինին, դատական Նախարարութիւնն յատուկ շրջաբերականով մը բացարձակապէս արգիլեց այս կանոնազանցութիւնն և խիստ պատիժներ սահմանեց այն զանցառուաց համար, որք դատարանաց հասոյթը փոխանակ կեդրոնական Սնտուկին յանձնելու, ամսականաց վճարման կը յատկացնեն։

Սէլանիկէ զրահաւորը Նորոգելու համար արքունի նաւարանը տարուեցաւ։

Կը յիշուի թէ Երկիրիի (Արկիրօքասթրօ) Նորընտիր կառավարիչ Հալիմ փաշա իւր պաշտօնատեղին գնացած պահուն, ճանբան պաշարուած էր աւազակներէ որք Ն. Վսեմութեան ինչքը կողոպտելէ յետոյ, խոյս տուած էին անարգել։ Զարագործք անպատիժ մնացած լինելով, համարձակեր են այս օրերս ալ քաղաքը մտնել և հարուստ Թուրքի մը տանն այրեր են։ Բաց աստի այլ և այլ չարագործութիւններ ի գործ կը դնեն գիւղօրէից մէջ և շրջակայքն. Արկիրօքասթրօէն մէկ ժամ հեռու գիւղի մը հացագործն և ուրիշ գիւղի մ'ալ ջաղացպանն սպաններ են։

Երկու օր առաջ, Ֆէրի գիւղ բողոքականաց գերեզմանատան ձորերուն մօտ հետեւեալ դէպքը տեղի ունեցաւ զոր Լա Թիւրքի ականատես անձի մը բերնէն լսելով կը պատմէ։

— Յոյն քահանայ մը այն կողմերը կը շրջէր իւր եղբօր աղջկան հետ։ Յանկարծ երկու ծովային զինուորք վրանին յարձակելով քահանային քսակը պահանջեցին։ Մանկամարդ աղջիկն աճապարեց՝ ստիպեց իւր հօրեղբայրն որ վրան գտնուած բոլոր ստակն յանձնէ. հինգ ոսկի ունէր քահանան և յանձնեց զայնս։ Զարագործք ասով չշատանալով աղջկան կողմը դարձան և մատանին յափշտակելէ յետոյ, փորձեցին առնուլ տանիլ զայն։ Այդ միջոցին ներկայ գըտնուող անձինք որք այդպիսի պարագայից մէջ անտարբեր կը մնան, օգնութեան փութացին։ Տեղւոյն ոստիկանապետ Իսլամ աղա ևս իւր մարդերով վրայ հասնելով այս պահուս զօրականներէն մին ձերբակալեց, իսկ միւս երկուքն՝ որոց քով կը գտնուէին մատանին և 5 ոսկին, խոյս տուին։

Յուսալի է որ անոնք ալ ձերբակալուելով, արժանաւոր պատժոյ ենթարկին։

Բերայի Թերթերէն ոմանք վերջերս հրատարակած լինելով թէ որսորդութեան արտօնագիրք այսուհետեւ Ոստիկանութեան կողմէ պիտի տրուին, Քաղաքապետութիւնը պաշտօնական ազդ մ'ուղղելով յիշեալ Թերթերուն կը ծանուցանէ թէ անհիմն է սոյն տեղեկութիւն և թէ որսորդութեան արտօնագիրք ըստ առաջնոյն կը տրուին Քաղաքապետութեան կողմէ։

Բ. Դրան պաշտօնատարներէն Ճէմալ պէյի փեսայ Հայտար պէյ ուրբաթ առաւօտ իւր Իւսկիւտարի ծովեզերեայ ապարանքին քարափին վրայ շրջած պահուն, լուսնոտութենէ բռնուելով, ծովն ինկաւ։ Թէեւ ամեն կողմէ օգնութեան փութացին և բժիշկներ կանչուեցան, սակայն խեղճին մարմինն անկենդան էր երբ ծովէն հանեցին։

Նախընթաց օր Գատը գիւղի մէջ գիշերապահ Մկրտիչ Կլիսթօ և Բաքաստօբուլօ անուն երկու յոյներու հետ ոչինչ պատճառաւ կռուի բռնուելով, դաշոյնով ծանրապէս վիրաւորեց զանոնք։ Առաջնոյն վիճակը յուսահատական է, իսկ երկրորդն ազատելու յոյս կայ։

Գիշերապահը ձերբակալուած է։

Հռչակաւոր աւազակապետ Մէհմէտ Փէհլիվան կը շարունակէ ոստիկանութեան քթին խնդալ։ Մերթ Կէպզէի մէջ երեւան կ'ելնէ մերթ Գարթալի ու Քիլիայի շրջակայքն, ու միշտ առիթ կը գտնէ հալածանքէ խոյս տալու։

Նիկոմիդիոյ կառավարիչը լուր տուած է Քաղաքապետութեան թէ Մէհմէտ Փէհլիվան յաճախ Շաքիր աղա անուն մարդու մը տունը կ'ապաստանի, և դեռ անցեալ շաբթու գիշեր մ'անցուցեր է անդ իւր արբանեկաց հետ։

Երկու օր առաջ Թարապիոյ մէջ կատաղած շուն մը չորս հոգի խածաւ, որոց մին հինգ տարեկան տղայ մ'էր։ Այս վերջինը դարմանուեցաւ ֆրանսական սպահակ շոգենաւուն բժշկին ձեռամբ, իսկ միւսները մերժեցին անոր դարմաններն ըսելով թէ, իրենք կրնան ապահովապէս բժշկուիլ Պաշչէ-քէօյի կնոջ մը դեղովն որ կատաղութեան դէմ «միակ դարմանն» է։

Այս ամենն անշուշտ ուսումնասիրութեան բաւական նիւթ կը հայթայթեն Տոքթ. Տիւժարտէն Պոմէցի։

Շաբաթ օրը Տրապիզոնէն Շէրէֆիէան շոգենաւով 1138 նոր զօրք եկան մայրաքաղաքս։

Իզզէթ և Հիւսէյին անուն երկու խուլամբ, որ Խալիլ անուն հրէի մը քսակը բռնութեամբ յափշտակելէ յետոյ զիրենք հալածող ոստիկանաց վրայ զէնք քաշած էին, պատժական օրինաց 221րդ յօդուածին համեմատ չորս տարուան բանտարկութեան դատապարտուեցան Ոճրադատ Ատեանէն։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

ՍՊԱՆԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Մատրիտ, 21 օգոստոս

Երկրին մէջ յուզումն երթալով կ'աճի ընդդէմ Գերմանիոյ, Քարոլինեան կղզեաց գրաւման պատճառաւ։

Մատրիտ, 21 օգոստոս եր.

Այսօր, միջօրէին յետոյ, Մատրիտի փողոցներուն մէջ ցոյցեր եղան ընդդէմ Գերմանիոյ. ոստիկանաց խումբ մը կը պահպանէ գերմանական դեսպանութեան ապարանը։

Մատրիտ, 23 օգոստ.

Մատրիտցիք այսօր միթինկ մը գումարելով Բրատօ զբօսարանին մէջ, բողոքեցին ընդդէմ Քարոլինեան կղզեաց գրաւման ի Գերմանաց։ Միթինկին մասնակցող անձանց Թիւն 150,000 կը հաշուի։

ՀՆԴԿԱԽՏՆ ՅԵՒՐՈՊԱ

Մարսիլիա, 21 օգոստոս

Այսօր, 69 հոգի մեռան հնտախտէ։

Թուլոնի մէջ երկու հոգի մեռան հընտախտէ։

Մատրիտ, 21 օգոստոս

Հնտախտի վերջին ցուցակը կը նշանակէ 1400 մահ։

Մարսիլիա, 22 օգոստոս

Այսօր 46 հոգի մեռան հնտախտէ։

Թուլոնի մէջ 6 հոգի մեռան հնտախտէ։

Մարսիլիա, 23 օգոստ.

Այսօր, 45 հոգի մեռան աստ և ի Թուլոն՝ տասն հոգի։

Մատրիտ, 23 օգոստ.

Հնտախտի վերջին ցուցակը կը նշանակէ 1720 մահ։

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Բեդրսպուրկ, 12 օգոստոս

Զիւլֆիքարի խնդիրը կարգադրուած չէ, ըստ որում կառավարութիւնը տակաւին տեղագրական տեղեկութեանց կ'սպասէ այս երկրի մասին։

ՍՈՒՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Գահիրէ, 20 օգոստոս

Անգլիական բանակին մէկ մասն անյապաղ Անգլիա պիտի վերադառնայ։

Գահիրէ, 21 օգոստ.

Գասսալայի պահապան զօրքը, չկրնալով դիմադրել, պայմանադրութիւն մը կնքեր է ապստամբաց հետ։

ՕԼԻՎԻԷ ԲԷՆ

Փարիզ, 22 օգոստոս

Աժանս Հավաս կը հրատարակէ Եգիպտոսի անգլիական գործակատար Պ. Էկկէրդընի մէկ հեռագիրն օգոստոս 21 Թուականաւ և Սուտանի բանակին կցորդ հազարապետ Քիչնէրի մէկ հեռագիրն օգոստոս 22 Թուականաւ ։

Այս հեռագրեր, զորս Անգլիոյ արտաքին գործոց Նախարարութիւնն հաղորդած է ֆրանսական կառավարութեան, կը հերքեն թէ Օլիվիէ Բէն հրացանի բռնուած է, ինչպէս Սուտանի անգլիական բանակին Նախկին Թարգման Պ. Սէլիքովիչ կը հաստատէր Էնթրանզիժանի մէջ հրատարակեալ Նամակաւ մը։

Փարիզ, 15 օգոստ.

Էնթրանզիժան ի մէջ այս առաւօտ հրատարակեալ Նոր Նամակաւ մը, Պ. Սէլիքովիչ, հակառակ Պ. Էկկէրդընի և հազարապետ Քիչնէրի հերքմանց, կը պնդէ միշտ թէ, ապրիլ 28 ին, Օլիվիէ Բէն հրացանի բռնուեցաւ անգլիական իշխանութեանց հրամանաւ ։

ՁԱՐՆ Յ'ԱԻՍՏՐԻԱ

Բեդրսպուրկ, 23 օգոստ.

Ձարը, բազմաթիւ ուղեկիցներով, այս գիշեր մեկնեցաւ ի Քրէմսիէր (Մորաւիա), ուր տեղի պիտի ունենայ Աւստրիոյ կայսեր հետ տեսակցութիւնը ։

ՍՈՒԷԶԻ ՋՐԱՆՑԸ

Իսմայիլիա, 22 օգոստոս

Օգոստոս 10 էն 20 Սուէզի ջրանցքէն անցնող Նաւուց թիւն է 79 և տասնօրեայ հասոյթն 1,410,000 Ֆրանք ։

ԱԺԱՆՍ ՌԻՒԴԷՐ

Բեդրսպուրկ, 29 օգոստ.

Ժուռնալ տը Սէն Բեդրսպուրկ իւր այս առաւօտ թուով կը ծանուցանէ թէ Ռուսիա ետ կեցած է Զիւլֆիքարի վրայ ունեցած պահանջումներէն ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ
(ԴՈՒՐԳԷՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)
ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

Այս Կրթարանն հաստատուած է 1876 Յուլիս 1ին և, իբրեւ երկրորդական («[illegible]») վարժարան, վաւերացեալ է Հասարակաց Կրթութեան պաշտօնէութենէն ։

Երկրորդական վարժարանի մէջ աւանդելի բոլոր ուսմունք եւ Հայերէն, Թուրքերէն, Գաղիերէն, Անգլիերէն և Յունարէն լեզուք կ'ուսուցուին աստ ի ձեռն ուսուցչական ընտիր մարմնոյ մի ։

Երկրին և ազգին պէտոյից համաձայն՝ մի քանի կարեւոր փոփոխմունք մուտ պիտի գտնեն ուսմանց Ցայտագրին մէջ, ի մասին մանաւանդ լեզուաց ուսուցման, սկսեալ յառաջիկայ շրջանէն ։

